Իմ մկրտության օրը

Մեգան Ս., 10 տարեկան, Միչոական (Մեքսիկա)

Ողջո՛ւյն Իմ անունը Մեգան է, և ես ապրում եմ Մեքսիկայում: Ես ցանկանում եմ ձեզ պատմել իմ կյանքի մի շատ հատուկ պահի մասին՝ այն օրվա մասին, երբ ես մկրտվեցի:

Ես մկրտվեցի իմ ութերորդ տարեդարձի օրը: Շատ կարևոր օր էր, քանի որ ծննդյանս օրը նշեցի մկրտվելով:

Մկրտվելը գեղեցիկ փորձառություն էր: Մայրս ինձ համար պատրաստեց մի տետր՝ տարբեր միջոցառումներով, որպեսզի ես պատրաստվեմ: Այն օգնեց ինձ սովորել մկրտության կարևորության և ուխտերի մասին, որոնք ես կապելու եմ Երկնային Հոր հետ:

Շատ մարդիկ, ովքեր սիրում են ինձ, եկել էին իմ մկրտությանը: Ես շատ ուրախ էի, որ նրանք եկել էին: Ես հագել էի սպիտակ զգեստ, իսկ ջուրը տաք էր:

Այն բանից հետո, երբ հայրս մկրտեց ինձ, ես չորացա և փոխեցի հագուստս: Հետո ես ստացա Սուրբ Հոգու պարգևը: Քահանայություն կրողների կողմից ես հաստատվեցի որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ: Ես զգում էի խաղաղություն, սեր և ուրախություն:

Ես միշտ կհիշեմ այդ օրը: Այն շատ յուրահատուկ էր, քանի որ ես իմ առաջին ուխտը կապեցի Աստծո հետ: Ես խոստացա հետևել Հիսուսին և ինազանդվել Նրա պատվիրաններին:

Եթե դուք նյարդայնացած եք, թե ինչպիսին է լինելու ձեր մկրտության օրը, ապա մի անհանգստացեք: Երկնային Հայրը ուրախ կլինի ձեր կատարած ընտրությամբ: ●

ԱՄՐԸ՝ ՕՅԱ ԼԻ